

ԶՄՅՈՒՌՆԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ
1800—1850-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Մ. Ն. ՀԱԿՈՔՅԱՆ

Հայ գաղթօջախներից Զմյուռնիսըն (Թուրքական անվանումով Իզմիր) բացառիկ տեղ ու դեր ունի՝ իր ազգային դիմագծով, հայկական վարք ու բարքով, մշակութային ճոխ կյանքով, նաև իր ամբողջ պատմությամբ, որ խզվեց 1922 թ. սեպտեմբերին Թուրք-հունական պատերազմի վերջնամուտին:

Զմյուռնիայի հայկական գաղթօջախում հայության ստվարացումը հիմնականում կապվում է Կիլիկիայի հայկական թագավորության անկման (1375 թ.), ապա և Շահ-Աբբասի արշավանքների (ընդմիջումներով՝ 1603—1639 թթ.) հետևանքով տեղի ունեցած հայերի գաղթեցման հետ: Հաջորդ հարյուրամյակում, մասնավորապես Դավիթ-Բեկի գլխավորած ազատագրական շարժումների պարտությունից հետո, զմյուռնահայ գաղութն ավելի է ստվարացել Սյունիքից, Արարատյան դաշտից, Նոր Զուղայից և այլ վայրերից այնտեղ գաղթած հայ զանգվածների հաշվին¹:

Մովսիսյա առևտրաշահ և տարագր քաղաքում տնտեսապես կայուն վիճակ ստեղծելու համար հայ շերտերը նպաստավոր գետին են գտել և միջին դարերից լայն առևտուր են ծավալել ոչ միայն Փոքր Ասիայում, այլև արևմտյան մի շարք երկրներում, մասնավորապես Հոլանդիայում, ապա նաև Տրիեստում, Վենետիկում, Մանչեստրում և այլուր: Զմյուռնահայ առևտրականները ևս հաջողությամբ մրցում էին հույն առևտրականների հետ և հայտնի չափով իրենց ձեռքն էին վերցրել Թուրքիայի ներքին և արտաքին առևտուրը: Նշանակալից է, որ հայ առևտրական Պետրոս Ապրոն (Ապրոյան) դեռևս 1717 թ. հունվարին, Ամստերդամում Պետրոս առաջինից հատուկ հրովարտակ է ստացել՝ Ռուսաստանում ամենաարտոնյալ պայմաններով ազատ առևտուր ծավալելու մասին²: Օտար-երկրյա մի ճանապարհորդի վկայությամբ զմյուռնահայերը «իրենց ավանդական վաճառականի հանճարովն և իրենց ունակությամբն այնպիսի մեծ մրցության մեջ մտած են անգղիական և հունական վաճառականաց հետ, որ այս վերջինները ստիպված են իրենց գործը դադրեցնել»³: Իրենց բնատուր

¹ «Մեր նախնիք այն հայ գաղթականությանց բեկորներն են, որ Արարատեն, Նոր Զուլիայեն ու Խարանեն ելնելով այս եզերքն ընկեր էին հալածանքն և բռնությունն ազատ ապավեն մը գանելու համար»,— գրել է «Արևելյան մամուլը» 1875 թ. (էջ 416): Զմյուռնիայի հայերի շատ տապանագրեր սկսվում են այսպիսի սկզբնատողերով. «Այս է տապան շուղայիցի...», «Այս է տապան քիֆլիզի...», «Այս է տապան երևանցի...», «Այս է տապան Ղափանցի ի գեղչեն գյումրեցի...», «Այս է տապան շաշկետցի...» (Հ. Քոսյան, Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, հ. Ա, Վիեննա, 1899, էջ 85, 87, 90, 91, 96 և հետո): Սյունիքից Զմյուռնիա է բաղթել մասնավորապես Դավիթ-Բեկի հայտնի զորավար Զավնգուրի իշխան Թորոսի գերդաստանը՝ «գեղատես և արի» Նուպար իշխանի գլխավորությամբ: Վերջինից էլ սերում է Նուպարյան հայտնի տոհմը:

² Հրովարտակի հայերեն տեքստը տե՛ս «Արշալույս արարատյան», 1857, № 558—559, ռուսերենը՝ «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сб. док., т. 2, ч. 1, Ереван, 1964, стр. 105—107:

³ Հ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 33—34:

ձիրքերով աչքի էին ընկնում վմյուռնահայ արհեստավորները, պետական ծառայողները, բժիշկները, փաստաբանները: Հայտնի է հատկապես ծաղկավոր չթի արտագրության հայերի հիմնած գործարանը՝ պասմախանեն, որը շուրջ 50 տարի մեծ հռչակ էր վայելում նույնիսկ Եվրոպայում:

Ջմյուռնահայ գործարար շրջանների, այսպես ասած, միջազգային կապերն թեև անխուսափելիորեն իրենց կնիքն էին գնում գաղթօջախի կյանքի ու մշակույթի վրա, բայց չկարողացան նկատելի չափով փոխել գաղութի հայկական դիմագիծը, թեև նպաստեցին նրա մշակութային կյանքի զարգացմանը, բայց չպայմանավորեցին այն:

Դարեր շարունակ Ջմյուռնիայի հայկական գաղութը մաքառել է իր գոյատևման, ազգապահպանության ու հայ մշակույթի զարգացման համար: Պարբերաբար կրկնվող աղետները՝ երկրաշարժերն ու հրդեհները մեծապես խոչընդոտել են գաղութի առաջընթացը, կրկին ու կրկին աղքատության սյունին են գամել հազարավոր հայերի: Պակասը լրացրել են սուլթանական իշխանությունների ճնշումները, տեական ավազակությունները, դավանաբանական տարաձայնությունները և հաճախ ծայրահեղության հասնող ներքին պայքարը: Բավական է նշել, որ հայ գաղթական զանգվածները 3—4 անգամ ըստիպված են եղել փոխելու իրենց բնակավայրերը, վերջապես հաստատվելով հույների հարեանցիությամբ այն թաղամասում, որ հետագայում, 1845 թ. աղետաբեր հրդեհից հետո վերակառուցվեց ու ստացավ բնորոշ անվանում՝ Հայնոց: Դա Ջմյուռնիայի հայերի վերջին օրրանն էր, մի փոքրիկ Հայաստան, որտեղ մեր ժողովրդի մի բեկորն ապրում էր իր բնորոշ հայկական կյանքով, բարբերով ու կենցաղով:

Համեմատաբար փոքրաթիվ լինելով⁴, հայերը Ջմյուռնիայում, սկսած XIX դ. սկզբից, նշանակալի չափով զարկ են տվել հայ մշակույթի զարգացմանը և լուրջ ավանդ են ներդրել ուսումնա-կրթական գործի, հայ գրատպության, մամուլի, արվեստի ու գիտության ասպարեզներում. «Գաղթօջախը տվեց մտքի այնպիսի փառապասկներ, որոնք երբեմն պոլսահայերից խլում էին առաջնության դափնին»⁵:

Ջմյուռնիայի հայկական առաջին և խոշոր հաստատությունը, ինչպես և համարյա բոլոր գաղթօջախներում, եղել է եկեղեցին՝ ս. Ստեփանոսը, որը այուր հորինվածությամբ, պայծառությամբ և ճարտարապետական շքեղությամբ գերազանցում էր քաղաքում հիմնված լատինական և հունական 11 եկեղեցիներին: Նրանից առաջ գոյություն է ունեցել Հովհակիմ—Աննա տաճարը, որը 1688 թ. հուլիսին տեղի ունեցած երկրաշարժից կործանվել է: Վերըստին կառուցված տաճարը ևս խորտակվել է հաջորդ մեծ երկրաշարժից՝ 1778 թ.: 1845 թ. հուլիսին բռնկած մեծ հրդեհը հայկական թաղամասի հետ կործանել է նաև ազգային եկեղեցին, որի փոխարեն, սակայն, շուտով կառուցվել է նորն՝ «արդեամբք առ հասարակ ժողովրդոց Ջմիւռնոյս եւ մասնավոր նւրիօք ոմանց բարեպաշտից», ինչպես վկայում էր եկեղեցու փորա-

⁴ Ջմյուռնահայության վերաբերյալ թվական տեղեկությունները՝ 1631—1668 թթ. տատանվել են 6—10—12 հազարի միջև: 1820-ին այդ թիվը հասնում էր 10.000 մարդու, 1850-ին՝ 5.000, 1855-ին՝ 8.000 (տե՛ս «Արշալույս արարատյան», 1850, № 356, «Աստղիկ արեւելյան», 1855, № 48):

⁵ Հայկ. Ղաղարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967, էջ 444—445:

գիր արձանագրությունը: Ս. Ստեփանոս եկեղեցին գոյատևել է մինչև 1922 թ. աղետը: Այդ ժամանակ ճարտարապետական հուշանշան կառույցը, որի վերաշինության համար ներսես Աշտարակեցին հատկացրել էր «1000 բոլ իմպերիալ», իսկ ոսկեզօծ խաչկալի վրա ծախսվել էր 7000 լիրա, ավերվել է⁶:

Իր դարավոր գոյության ընթացքում Զմյուռնիայի թեմը մշտապես գրտնըվում էր էջմիածնի հովանավորության ներքո, շարունակ աչքի էր ընկնում մայր եկեղեցու նկատմամբ ունեցած իր անաղարտ հավատարմությամբ: Դրանում իր արտահայտությունն է գտել գաղթօջախի հայության ուրույն նվիրվածությունն ու անբաղտելի կապը հայրենիքի հետ: Ինչպես մայր ժողովուրդն, այնպես էլ զմյուռնահայությունը միմյանց հետ կապված էին ջերմորեն և դժվարին պահերին, մասնավորապես աղետների ժամանակ, իրտը օգնության ձեռք էին մեկնում:

Նշենք նաև, որ զմյուռնահայերը, ուր էլ ապրելիս լինեն, որքան էլ վաղուց լինեն թողած գաղթօջախը, սերտ կապեր ու զգացմունքներ են պահպանել Զմյուռնիայի հայկական համայնքի նկատմամբ: Իր հերթին գաղթօջախի հայությունը մշտապես իր հայացքը հառած է պահել դեպի մայր Հայաստանը, ամբողջ հայ ժողովուրդը: Դա եղել է Զմյուռնիայի հայկական գաղութի գոյատևման գրավականը:

Առաջին հայկական մշակութային հաստատությունը⁷, որը ստեղծվել է Զմյուռնիայում, Մահտեսի Մարկոսի տպարանն էր՝ հիմնված 1759 թ.⁸, Ընդամենը երեք գիրք է տպագրվել Մահտեսի Մարկոսի տպարանում. «Գիրք մեկնութեան...», որ հայտնի է նաև «Մեկնութիւն ժամանակագրութեան» անունով (1759, 79 էջ), «Խորհրդատեր» (1762, 40 էջ) և «Գիրք ընդդիմութեանց», որ նզնիկ Կողբացու հայտնի երկն է՝ «Եղծ աղանդոցը» (1763, 303 էջ): Միայն այս վերջին հրատարակությունը բավական էր, որպեսզի Մահտեսի Մարկոսի տպարանը պատվավոր տեղ գրավեր հայ տպագրության պատմության մեջ: Իր պատմական խոշոր արժեքից բացի այդ հրատարակությունը, մինչև ձեռագրի հայտնաբերումը (1902 թ.), կատարել է բնագրի դեր⁹, երկար ժամանակ ծառայել է իբրև գրաբարի ձեռնարկ և հիմք է հանդիսացել ինչպես մի շարք հրատարակությունների, այնպես էլ գիտական ուսումնասիրությունների համար:

Մաշտոցի աշակերտի այդ երկի տպագրությամբ, որ իրագործվել է պատերազմի շակոր նալյանի հսկողությամբ (խմբագրությամբ) և ընդարձակ առաջաբանով՝ տեղի հոգևոր առաջնորդ Աբրահամ վարդապետի նախաձեռնու-

6 Ս. Ստեփանոս տաճարի մասին տե՛ս Հ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 45—78, «Մեր Զմյուռնիան», Նիւ Յորք, 1861, էջ 11—12, «Դաշինք», 1911, № 982 և հետո:

7 Վերջերս լույս տեսած մի հաղորդման մեջ (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 1, Ա. Ա. Խառատյան, Զմյուռնահայ լուսավորական շարժումների պատմությունից. 19-րդ դարի 40—60-ական թթ.) տեղ են գտել գաղթօջախի մշակութային կյանքի հետ կապված մի շարք փաստերի սխալ մեկնաբանումներ և բազմաթիվ աղավաղումներ: Դրանց մենք անդրադարձել ենք առանձին:

8 Դրականության մեջ երկար ժամանակ մատնանշվում էր, որ Զմյուռնիայում 1676 թ. գոյություն է ունեցել հայկական տպարան: Ա. Ալպոյաճյանը ցույց է տվել, որ դա ճիշտ չէ (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 69):

9 Ենթադրվում էր թե 1845-ի հրեհի ժամանակ ձեռագիրը հոր ճարակ է դարձել: Սակայն 1902 թ. Հր. Աճառյանը, ստանալով Գ. Տեր-Մկրտչյանի կողմնորոշող ցուցումը, հայտնաբերեց ձեռագիրը (պահպանվում է Մատենադարանում, № 1097):

թյամբ, տպագրիչ Մահտեսի Մարկոսը և Զմյուռնիան մեծ ծառայություն են մատուցել հայ մշակութիին: Տպագրիչի խոսքերը ցույց են տալիս, որ լիովին գիտակցում էր գործի պատմական նշանակությունը. «զՐոժման գալ կեանս իմ ընդ գոյից իմոց վատնեցի, մինչև շնորհիւ Տեառն ղտպագրատանս զայս ի լոյս ածի, յօգուտ և ի պայծառութիւն ազգիս»¹⁰: Նա պատրաստ էր «ի շահ ընթերցասիրաց» նոր գրքեր հրատարակելու: Սակայն Մահտեսի Մարկոսին և նրան աջակցող բավարար թվով հովանավորներին ու աշխատողներին (Հոհան Սյունեցի՝ «ի գեղջե աղուանական», Սիմոն Երևանցի, Մեսրոպ Գանձակեցի՝ «գիտնական վարդապետ», Մահտեսի Սիմոն, նոտար Մնացական Մարգարյան, գրաշար՝ տիրացու Հովհաննես, մրադարկության վարպետ Մահտեսի Իգնատիոս) չվիճակվեց հրատարակելու նույնիսկ արդեն տպագրական պրոցեսում գտնվող Սաղմոսը¹⁰:

1763-ից հետո Զմյուռնիայի անդրանիկ տպարանում տպագրված որևէ դիրք հայտնի չէ: Հայտնի չեն նաև նրա փակվելու մանրամասները, բայց կան վավերագրեր, որոնք թույլ են տալիս հավաստի համարելու տպարանը էջմիածնի միջամտությամբ փակվելու վարկածը: Բանն այն է, որ կաթողիկոս Սիմեոն Երևանցին, որոշելով էջմիածնում տպարան հիմնել, առաջարկում է Զմյուռնիայի հոգևոր առաջնորդ Ղուկաս եպիսկոպոս Կարնեցուն բանակցել Մահտեսի Մարկոսի հետ, որպեսզի նա, «յուր սեփականությունն եղող տառերն հետը առնելով, ելլե գա առ ինքն էջմիածին»¹¹: Տպագրիչը խոնարհաբար հրաժարվում է այդ հրավերից՝ պատճառաբանելով թե նպատակ ունի մի Սաղմոսարան տպագրել: Կաթողիկոսը պնդում է իր պահանջի վրա, առաջարկում Ղուկաս եպիսկոպոսին վճարել հարկավոր գումարը և Մահտեսի Մարկոսին ճամփել էջմիածին, որտեղ նա կարող է տպագրել ցանկացած գիրքը: Դա էլ չօգնեց: Շուրջ մեկ տարի տևած գրադրությունը, որ երբեմն խիստ տոնով էր ընթանում, արդյունք չտվեց¹¹: Միայն 1771 թ. հաջողվում է հիմնել Մայր աթոռի տպարանը, իսկ Մահտեսի Մարկոսի ընդդիմությունը, հավանաբար, պատճառ է դառնում, որպեսզի կրոնական գործիչների ջանքերով տպարանը փակվի:

Դրանից հետո հայ գրատպությունը Զմյուռնիայում ընդհատվեց շուրջ յոթանասուն տարով:

Կան փաստեր, որոնք վկայում են, որ Մահտեսի Մարկոսի տպարանը միջնադարյան Զմյուռնիայի միակ մշակութային օրրանը չէր: Զմյուռնիան եղել է հայ գրչության կենտրոններից մեկը՝ սկսած 1635 թ., երբ Սարգիս քահանա Մարգար դպիրն ընդօրինակեց մի բժշկարան, որը պարունակում է նաև Ամիրդովլաթ Ամասացու «Ուսումն բժշկության» գործը (ընդամենը 201 էջ)¹²:

Զմյուռնահայ գաղթօջախի պատմությամբ զբաղվողների ուշադրությունից այս հանգամանքը վրիպել է: Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ

10 Ա. Ալպոյաճյան, Տպագրության արվեստը և հայք, էջ 407—408 (ձեռագիրը տե՛ս Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան՝ ԳԱԹ):

11 Տե՛ս Գ. Զարպաճյան, Պատմութիւն հայկական տպագրութեան, Վենետիկ, 1895, էջ 182—183, 233—235:

12 Տե՛ս «Ժողովական ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», կազմեցին Օ. Եղանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, խմբագրությամբ Լ. Խալիկյանի, Ա. Մնացականյանի, Կ. Ա. Երևան, 1965, էջ 315 (ձեռագիրը տե՛ս Մատենադարան, № 413):

Զմյուռնիայում եղել են նաև ջանադիր գրիչներ, որոնք պատվերներ են ստացել, ընդօրինակել են ոչ քիչ թվով մագաղաթյա մատյաններ և դրանով իսկ նպաստել են հայ մշակույթի տարածմանը:

Մեզ հասած հաջորդ ձեռագիրը, որ մասամբ ընդօրինակվել է Զմյուռնիայում և ժամանակագրական կարգով հաջորդել է Մարգար դպիրի գրագրին, Մատենադարանի № 1405 ձեռագիրն է՝ ընդօրինակված 1651 թ.: Դա մի ժողովածու է, որի առաջին մասը ընդօրինակվել է անհայտ մի գրիչ՝ Զրմյուռնիայում, իսկ երկրորդ մասը՝ Վարդան Սարկավազը՝ էջմիածնում: 1657—1700 թթ. Զմյուռնիայում ընդօրինակված կամ գրված 10 այլ ձեռագրեր ևս հասել են մեզ և պահպանվում են Մատենադարանում: Այդ թվականներին Զմյուռնիայում գրչությամբ են զբաղվել նաև Պետրոս անունով մի գրիչ, Պողոս Յոնեցին, Զաքարը, Սիմոն երեցը, Գրիգոր Կոստանդնուպոլսեցին և ուրիշներ: Հետագա ժամանակաշրջանում նույնպես Զմյուռնիայում գործել են հայ մեղվաջան գրիչներ, որոնք գրել կամ ընդօրինակել են XVIII դ.՝ 12, իսկ XIX դ. առաջին երեսնամյակում՝ 22 ձեռագրեր: Միայն մատենադարանում պահպանվում են Զմյուռնիայում սկսված կամ ավարտված 46 ձեռագրեր¹³: Զմյուռնացի գրիչների թողած հիշատակարանները, նրանց բուն գործից զատ, արժանի են հատուկ ուշադրության:

Ենթադրություն կա, որ XVIII դարակեսին Զմյուռնիայում գոյություն են ունեցել դպրատներ, որտեղ կրթություն էին ստանում հայ երեխաները: Դրանց հիմնադրումը կապվում է Սիմեոն եպիսկոպոս Երևանցու անվան հետ, որը մի կարճատև ժամանակամիջոց եղել է Զմյուռնիայում¹⁴, Սակայն այդ ժամանակ դպրատների գոյությունը հաստատող ժանրակշիռ կովաններ դեռևս չկան: Բայց հավաստի է, որ դարակեսին գաղթօջախում գործունեություն է ծավալել Մեսրոպ վարդապետ Գանձակեցին: 1762 թ. մայիսի 6-ին վախճանված վարդապետի տապանագրից, ինչպես դա նկատել է Թ. Ճերմակյանը, երևում է, որ նա եղել է «ստփեսաս հեղ միայնակ / վարժեալ ի գահը լուսակերտակ / զկաթն իմաստից անվրիպակ / ջամբող մանկանց իբր. զդայակ...»¹⁵: Մանուկներին իմաստության կաթ ներարկող, ասել է թե երեխաներին ուսում տվող, այդ վարդապետը հավանաբար գաղթօջախի սակավաթիվ գրագետ ու կրթված անձնավորություններից էր: 1758—1759 թթ. նրա ընդօրինակած երեք ձեռագիրը՝ արժեքավոր հիշատակարաններով հանդերձ, պահպանվում են Մատենադարանում: Հաջորդ տարիներին, մինչև վախճանվելը նա աջակցում էր զմյուռնահայ առաջին տպագրիչին, մասնավորապես տպագրության էր պատրաստում Եզնիկ Կողբացու երկը: Այս փաստերը նույնպես վկայում են վաղ շրջանում Մեսրոպ Գանձակեցու ձեռնարկած լուսավորական գործերի մասին:

Մեսրոպ Գանձակեցին ունեցել է իր անմիջական հետևորդները հանձին զմյուռնահայ գրիչներ Սողոմոն աբեղայի, տիրացու Աստվածատուրի և այլանուն գրիչների, որոնք ձեռագրեր են ընդօրինակել XVIII դ. վերջին և XIX

13 Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց», հ. Ա, Բ, Վերը բերված տեղեկությունները բխեցված են հայ հին ձեռագրերի ցուցակների այդ հրատարակության նկարագրություններից: Հին ձեռագրերի այլ ցուցակների մենք չենք դիմել:

14 Տե՛ս «Եփեան հայոց պատմութեան», Թիֆլիս, 1894, հ. Գ, էջ 28, Ա. Ալպոյաճյան, Զմյուռնիո տպարանները («Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2, էջ 71):

15 Հ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 91—92 և «Աշխատանք», 1912, № 104:

դ. սկզբին: Իր տպարանի փակվելուց հետո Մահտեսի Մարկոսն, անշուշտ, անգործ չի նստել, ինչպես և նրան աջակցող գործիչները շեն դադարել դործելուց, սակայն այդ մասին ստույգ տեղեկություններ չկան: Բայց նրանց ցանած հունդերը չէին կարող ծիլեր չտալ և բերրի դետին շնախապատրաստել հայ մշակույթի զարգացման համար Զմյուռնիայի հայկական գաղթօջախում:

Առաջին ուսումնական կանոնավոր հաստատությունը Զմյուռնիայում հիմնվել է 1799 թ.¹⁶ նախկին պրիմիտիվ «գալրատներ» փոխարեն: Դրանով վերջ տրվեց այն վիճակին, երբ, ինչպես դիպուկ բնորոշել է Մ. Մամուրյանը, «ուսումն ու գիտությունը պերճանք մ'էր՝ շատերուն անհպելի, ազնվապետության կամ կղերին բաժինն էր, որ պատվար կոնքեր իր և ժողովրդյան մեջ, ունեորին և շունեորին մեջ...»¹⁶: Ի տարբերություն շատ այլ վայրերի, որտեղ դպրոցները կոչվում էին այս կամ այն բարերարի անունով, Զմյուռնիայի նորաստեղծ ուսումնական հաստատությունը ստացավ հայ գրերի մեծ ստեղծող Մեսրոպ Մաշտոցի անունը՝ կոչվելով Մեսրոպյան վարժարան:

Հայ գաղթօջախներում, ինչպես և ամենուր, ուսումնա-կրթական գործի կազմակերպման գլխավոր պայմանը եղել է համապատասխան շենքի առկայությունը: Զմյուռնիայում այդ խնդիրը սկզբնապես լուծվել է մասնավոր նվիրատվությամբ: Ապրույան մեծահարուստ առևտրականի նվիրած փայտաշեն, միահարկ շենքում էլ տեղավորվել է Մեսրոպյան վարժարանը: Որոշ վերակառուցումների ենթարկվելով, այդ շենքը, թեև շատ խղճուկ, շուրջ քսանհինգ տարի ծառայել է գաղթօջախի միակ ուսումնական հաստատությանը: Միայն 1825-ին զմյուռնահայությանը հաջողվել է կառուցել դպրոցի երկհարկանի, «քար ու կիր», ընդարձակ շենքը՝ նախկինի տեղում, «ազգային եկամտից սատարութեամբ» և «ծախիւք Ս. Ստեփանոս եկեղեցւոյս... ի վարժումն օրհնեալ Ազգիս դեռաբոյս մանկանց»¹⁷:

Թուրքական իշխանություններն աներևակայելի դժվարություններ են հարուցել վարժարանի շենքի շինարարության դեմ: Երբ կառուցումն ավարտվելու մոտ էր շինարարությունը դադարեցվել է և «բոլոր ազգապետները» բանտ են նետվել: Ներկայացված մեղադրանքն ավելի քան տարօրինակ էր: Դպրոցական շենքը քարից ու բարձրահարկ կառուցելը թուրքական իշխանությունները կապեցին այդ ժամանակ Հունաստանում տեղի ունեցող ազատագրական պատերազմի հետ. «Ժիշտ հելլենական ապստամբության միջոցին, տեղական կառավարությունն այն կասկածը կունենա կամ կձևացնե, թե հայերն այլ ապստամբության կպատրաստվին և անոր համար ամրացանման շենք մը կկառուցեն»¹⁸: Դպրոցի հովանավորությունը ստանձնեցին ազդեցիկ մարդիկ, իր դերը կատարեց կաշառքը և Մեսրոպյան վարժարանի նոր շենքն ընդունեց զմյուռնահայ տղաներին¹⁹:

Մեսրոպյան վարժարանը շուրջ 125 տարի (1799—1922 թթ.) եղել է Զմյուռնիայի հայկական գաղութի մշակութային գլխավոր օջախը: Ուսումնա-կրթական գործը վարժարանում շարունակ վերակառուցվել է ժամանակի

¹⁶ «Արևելյան մամուլ», 1875, էջ 116.

¹⁷ Հ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 119.

¹⁸ «Աշխատանք», 1912, № 106.

¹⁹ Հետագայում Հով. Սպարթալյանի ծախսերով, 1886-ին կառուցվել է նոր շենք, որի հանդիսավոր բացումը կատարվել է նոյեմբերի 30-ին.

ոգուն համապատասխան՝ մշտապես հետևելով առաջադիմական մեթոդներին, Դպրոցն իր սաներին դաստիարակել է հայրենասիրական ոգով, նրանց տվել է լեզվագիտական և հայագիտական հարուստ գիտելիքներ: Մեսրոպյանի շրջանավարտների բեղմնավոր, լայնածավալ և հիմնականում առաջադիմական գործունեությանն է պարտական զմյունահայ գաղութը մշակութային իր ճոխ և ազգանպաստ կյանքի ու պատմության համար: Ըստ էության վարժարանը դարձել է գաղութի հայ հասարակական մտքի կազմավորման օրրանը, առաջադիմական գաղափարների ակունքն ու ավազանը, պահպանողականների և լուսամիտ գործիչների տեղական պայքարի կենտրոնակետը: Բնավ պատահական չէ, որ ժամանակի հայ առաջադիմական գրեթե ամբողջ մամուլը, հայ ակնավոր մանկավարժները մեծ ոգևորությամբ ու համերաշխությամբ են արտահայտվել Զմյունիայի հայոց ազգային վարժարանի մասին:

1800—1850-ական թվականներին Մեսրոպյան վարժարանի գործունեությունը համարյա ամբողջապես կապված է հայ երախտաշատ երկու մանկավարժների՝ Հովհաննես Միրզայան Վանանդեցու (Հովհան Վանանդեցի)²⁰ և Անդրեաս Ռուբեն Փափազյանի անունների հետ²¹:

Մեսրոպյան վարժարանը փաստորեն հիմնել է Հովհ. Վանանդեցին (1772—1840): Ավելի քան քառասուն տարի՝ գրեթե մինչև կյանքի վերջը նա կապված է եղել վարժարանի հետ, շուրջ երեսուն տարի նրա հայկաբանության դասատուն, առաջին ուսուցիչը, նաև տեսուչն էր: 1799 թ., երբ արգեն ուսում էր ստացել նախ Կոտուց անապատում, ապա Կ. Պոլսի մայր դպրատանը՝ աշակերտելով Հակոբ Կարնեցուն, Շնորհ ամիրայի հորդորով նա առմիշտ ուսուցչական աշխատանքի է անցել Զմյունիայում: Գրեթե ոչինչ հայտնի չէ Վանանդեցու մանկավարժական գործունեության մասին: Բայց բազմամյա մանկավարժը միաժամանակ մեծ ստեղծագործող էր և նրա երկերը դրսևորում են նաև մանկավարժի նրա աշխարհայեցողությունը:

Հովհ. Վանանդեցին առավելապես հայտնի է Զմյունիայում կերտած իր մեծածավալ դյուցազնապոեմներով՝ «Արփիական Հայաստան» (1836), «Ոսկե դար Հայաստանի» (1841), «Տեսարան հանդիսիցն Հայկա, Արամայ և Արայի» (1856), որոնք պատշաճաբար գնահատվել են մեր գրականագիտության մեջ: Նա, ինչպես նկատել է Մ. Աբեղյանը, «միանգամից մեր թմրած, սառն ու անշունչ բանաստեղծությանը հոգի ու շունչ է տալիս... Նրանով է իսկապես սկսվում մեր նոր բանաստեղծությունը, որովհետև նրա գրվածքների մեջ առաջին անգամ գտնում ենք մեր 19-րդ դարու գեղեցիկ գրականության՝ գրեթե բոլոր գլխավոր գաղափարներն ու զգացումները»²²:

Վանանդեցու պոեզիայի թեման հայ ժողովրդի հերոսական պայքարն է, նրա դյուցազուն, առասպելացած հերոսները, որոնք, սակայն, ընկալվում են որպես իրական մարդիկ: Նրա ստեղծագործության առանցքը «Հայկյան տունն» է, արևափայլ Հայաստանը: Իր պոեզիայի գլխավոր թեման դարձնելով հայրենասիրությունը, «Մայր Հայաստանը, երկիր դրախտավայրը», երգ,

20 Վանանդեցու կնքանունը եղել է Ամիրզահե Միրզայի Միրզայան: Հովհան է անվանվել: 1817 թ.՝ քահանա կարգվելով:

21 Մեսրոպյանում երկարատև և արդյունավոր աշխատանք են ծավալել նաև դասատուներ Տեր Գալուստ քահանան, Տեր Մարգարե և ուրիշներ, որոնց գործունեությանը չնքն անդրադառնում այստեղ:

22 Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 597, 600:

որ այսօր էլ ապրում է նաև Վանանդեցու մեծիմաստ խոսքերի շնորհիվ, բանաստեղծ-լուսավորիչը գլխովին նվիրվել էր մանուկ սերնդի դաստիարակության գործին՝ նշանաբան ունենալով «Ի գիր, ի սուր և յարվեստն» ավանդական պատգամն՝ այն տարբերությունը միայն, որ զենքի պետք է դիմել միայն ինքնապաշտպանության համար, բայց երբ ներկայանա դիպվածը, ապա՝ «աննկուն սրտիվ տոկալ վտանգացն դժվարություն»:

Նշանակալից է, որ Հովհ. Վանանդեցին ըմբռնում և պրոպագանդում էր նաև ռուսական կողմնորոշման գաղափարը և, ի հակակշիռ «լիրք», «ժպիրհ», «ստամբակ» և «վարկապարազի» ամերիկյան միսիոներական «սին քարոզ-ների», հռչակում է.

Ի Մոսկովաց հայեաց կայսեր՝ զոր հայոց տա զովութիւն,
Ազդ է անկեղծ և մտերիմ առ ո՛ր և է տերութիւն:

Բանաստեղծ Վանանդեցին կանգնած է հայ միջնադարյան պոեզիայի և մեր նոր պոեզիայի հանգուցակետում, նրա քնարի հնչյուններում «գտնում ենք և՛ Ալիշան, և՛ Գամառ Քաթիպա, և՛ Պեշիկթաշլյան և նույնիսկ Աբովյան»²³, նույն տեղում է կանգնած նաև Վանանդեցի մանկավարժ-լուսավորիչը. հայկական միջնադարյան դպրոցի վերջնակետին և նոր դպրոցի սկզբնավորման նախօրյակին նա երկարատև և արդյունաշատ իր գործունեությամբ հող է նախապատրաստել հայ մշակույթի զարգացման համար Զմյուռնիայի հայկական գաղթօջախում:

Անդրեաս Փափազյանը (1806—1857) շուրջ տասը տարի աշխատել է Հովհ. Վանանդեցու հետ մեկտեղ և փոխարինելով նրան, քսանվեց տարի շարունակ՝ մինչև կյանքի վերջը, եղել է Մեսրոպյանի առաջին դասատուն ու տեսուչը²⁴, նա ժամանակի կրթված հայ գործիչներից մեկն էր, ուսում էր ըստացել Իտալիայում, որտեղ «շատ վիշտ, տառապանք, նեղություն, հիվանդություն և անձկություն» էր կրել, նրա տեսությունն ու մանկավարժական գործունեության օրոք Մեսրոպյանը դարձել է գաղութահայ առաջադիմական ու առաջնակարգ դպրոցներից մեկը և տվել է մտավորականների մի ամբողջ սերունդ:

Առաջին հերթին Փափազյանը Մեսրոպյան վարժարանն է մտցրել օտար լեզուների դասավանդումը՝ նախ իտալերենը, որի լավագույն գիտակն էր (նաև դասատուն), ապա ֆրանսերենը, որի դասավանդման ծախսերը ստանձնել էր տրիեստաբնակ զմյուռնացի Պետրոս Յուսուֆյանը: Այդ և մյուս օտար լեզուների դասավանդման փայլուն արդյունքը եղավ զմյուռնահայ առաջադեմ թարգմանիչների բույլի երևան գալը՝ սկսած 1850-ական թվականներից:

Մեսրոպյանի տեսուչը նորամուծությունների կողմնակից էր և նրան ալդ բանում աջակցում էին դպրոցի լուսամիտ հոգաբարձուները՝ Ստ. Պալասանյանը, Հովհ. Նուպարյանը, Գր. Կոստանդյանը, որոնք «տքնին անդադար ի բարեկարգություն դպրոցիս և հառաջադիմություն աշակերտաց», ինչպես գրում է ինքը՝ Մեսրոպյանի տեսուչը²⁵, նրանց ջանքերի շնորհիվ էր, որ զմյուռ-

²³ Նույն տեղում, էջ 604:

²⁴ Ա. Փափազյանի կյանքի և գործունեության ուրվագիծը տրված է «Սովետական մանկավարժի» 1962 թ. 11-րդ համարում տպագրված մեր հոդվածում (էջ 73—80):

²⁵ ՀՍՍՀ Միևիստորների սովետին առընթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մատենադարան, Մանրանների արխիվ, քղթ. 206, վ. 1482:

նահայ առաջադիմականները կարողացան կոտրել պահպանողականների համառ դիմադրությունը և 1835 թ. սկսել ճանհավատության, Վոլդեոֆ» լեզվի ուսուցումը: Սուր պայքարով է ֆրանսերենը մուտք գործել Մեսրոպյան վարժարանը, բայց ամուր մի պայմանով. «տղա մը չի կրնար օտար լեզու մը սորվելու սկսիլ, քանի որ հայերեն լեզվի քերականության առաջին մասը սորված չէ»²⁶:

Հավատարիմ իր մեծ նախորդի ավանդույթներին, Ա. Փափազյանը հատկապես մեծ տեղ է հատկացրել ու հոգատարություն հանդես բերել հայագիտության դասավանդման նկատմամբ՝ այն դարձնելով իր սաներին հայրենասիրության ոգով դաստիարակելու աղբյուր ու միջոց: Ժամանակակիցներից մեկը վկայում է՝ «շատ ախորժալի էր իրեն և մեծ զվարճություն կառթեր աշակերտաց, երբ պատմական դասերու մեջ... մեր նախնի հայ քաջազուններուն, Հայաստանի հնախոսության և սրբազան պատմության ալ և այլ մասերուն վրա տեղեկություն կուտար: Մեր ազգին քաջածայնքան թշվառությանց պատճառներուն... վերա խոսք բացած ժամանակը յուր արտասուքը չկրնալով բռնել, աշակերտաց սիրտը կփղծկեցներ և պատեհությունն ալ չըկորսնցնելով՝ կշանար աշակերտաց սրտին մեջ հայրենասիրության հուրն արծարծել, հասկցնելով մեր ազգին վերստին կենդանության միջոցները»²⁷:

Ա. Փափազյանը եղել է ժամանակի լավագույն ուսուցիչներից ու մանկավարժներից մեկը: Նրա սաներից Մ. Նուպարյանն, ընդգծելով Ա. Փափազյանի մանկավարժական հմտությունը, գրում է. «Արժանավոր դաստիարակն իր աշակերտներու ուշադրությունը, երևակայությունը, դատողությունը զբաղեցնելու, արթնացնելու, շարժման մեջ դնելու, զորացնելու գաղտնիքը գիտեր»²⁸: Խստորեն սահմանափակելով ֆիզիկական պատիժների կիրառումը, նա նախապատվությունը տալիս էր պատժի բարոյական ձևերին: Նա նաև առաջիններից մեկն է փորձել ֆիզկուլտուրան հայ դպրոց մտցնել, բայց հանդիպել է մեծահարուստ հոգաբարձուների դիմադրությանը: Փափազյանի տեսչության ժամանակաշրջանում Մեսրոպյան վարժարանը ստեղծել է իր հարուստ գրադարանը, ինչպես և թանգարանը՝ հնատիպ հրատարակություններով (դրանց թվում նաև 1695 թ. «Աշխարհացույցը») և բնագիտական գործիքներով:

Իր մանկավարժական աշխատանքին զուգահեռաբար Ա. Փափազյանը ծավալել է արտակարգ լայն ու արդյունաշատ մշակութային-լուսավորական գործունեություն: Դեռ 1836-ին Մեսրոպյանի սաներն Ա. Փափազյանի ղեկավարությամբ, իտալերեն բեմադրել են Գոլդոնի «Հյուրանոցի տիրուհին» կատակերգությունը, որն ունեցել է փայլուն հաջողություն և արձագանք է գտել նաև օտար շրջաններում: Դա հայ թատրոնի ուշագրավ էջերից մեկն է, որ իրագործվել է դարձյալ տեղական հետադիմության և թուրքական իշխանությունների հարուցած դժվարությունները հաղթահարելու շնորհիվ: Վերջինները ստիպված եղան թուլլատրել բեմադրությունը «պայմանով, որ փողար և թմբուկ չհնչեր երաժշտության մեջ»²⁹: 1840-ին նա հիմնել է վարժարանի

26 Սա հույն ճանապարհորդ Սլարսի վկայությունն է (տե՛ս 2. Քոսյան, նշվ., աշխ., էջ 36):

27 Ս. Փափազյան, Կենսագրութիւն Ուրբեն Անդրեաս Զ. Փափազեան բազմադէին վարժապետի և... Կ. Պոլիս, 1859, էջ 19:

28 «Արեւելյան մամուլ», 1893, էջ 472:

29 Նույն տեղում, 1875, էջ 419:

տպարանը (1840—1844), որտեղ իր հսկողությամբ ու տնօրինությամբ հրատարակվել է 10 անուն գիրք՝ գերազանցապես աշխարհիկ բովանդակությամբ³⁰, Նույն տարում նրա թեկադրիչ հորդորներով իր աշակերտներից մեկը՝ Ղ. Պալազարյանը հիմնել է արևմտահայ առաջին թերթը՝ «Արշալույս արարատյանը» (1840—1887), որը, հակառակ իր պահպանողական հարատև ուղղության, կարևոր դեր ունի արևմտահայ մամուլի պատմության մեջ:

Անդրեաս Փափազյանի անվան հետ է կապվում նաև Զմյուռնիայի հայտնի «Սյունյաց ընկերության» հիմնադրման գաղափարը: Նա այդ ընկերության խորհրդի անդամն էր և գործարար դեմքերից մեկը: Ընկերությունը ստանձնել է Մեսրոպյան վարժարանի հովանավորությունը՝ նպատակ ունենալով նպաստել նրա բարեկարգությանը, ինչպես նաև իր առջև խնդիր է դրել դպրոցներ հիմնել մերձակա հայկական գյուղերում, հոգ տանել աղքատ երեխաների ձրի կրթության ու դաստիարակության մասին: Կարճ ժամանակամիջոցում ընկերությունն ունեցել է մեծ թվով բաժանորդներ, պատկառելի հովանավորողներ, հայկական վեց բնակավայրերում իր միջոցներով բացել է դպրոցներ, որտեղ սովորում էին մոտ 2000 տղաներ: «Սյունյաց ընկերության» համբավը հայտնի էր ոչ միայն ամբողջ Թուրքիայում, այլ նաև Սփյուռքում, Իտալիայում, Ֆրանսիայում, Հնդկաստանում, Ռուսաստանում և այլուր, որտեղ նա ուներ և՛ բաժանորդներ և՛ հովանավորողներ: Նրա կանոնադրությունը հայ մշակութային կազմակերպությունների մեջ իր բացառիկ տեղն ունեցող այդ ընկերության գործունեության ու որդեգրած դեմոկրատական սկզբունքների վկայագիրն է:

Անհրաժեշտ է հատկապես նշել Ա. Փափազյանի արդյունաբեր ջանքերը Մեսրոպյանի սաների մեջ դեպի տպագրական և հրատարակչական գործը մանկուց սեր պատվաստելու ասպարեզում: Առանց որևէ չափազանցության կարելի է շեշտել, որ հայ մամուլի և գրատպության ծաղկումը Զմյուռնիայում 1840—1870-ական թվականներին, մասամբ նաև հետագա ժամանակաշրջանում կապվում են Ա. Փափազյանի սաների անվան հետ:

Այդ իմաստով հատկանշական է, որ Մեսրոպյանի մի խումբ աշակերտներ իրենց մեծ ուսուցչի աջակցությամբ ու հովանավորությամբ 1854 թ. հիմնել են իրենց «մտնկական» տպարանը և սկսել են հրատարակել «Թութակ հայկազյան» մանկական պարբերականն՝ ամբողջությամբ իրենք կատարելով բոլոր անհրաժեշտ գործերը՝ սկսած գրաշարությունից մինչև նյութերի խմբագրումը: Մի տարի հետո աշակերտների մի այլ խումբ, նույնպես Ա. Փափազյանից ոգեշնչված, սկսեց հրատարակել «Ծրկասեր» պարբերականը՝ դարձյալ իր տպարանում: Այս երկու պարբերականները հայ մանկական մամուլի առջնեկներից են, իսկ Ա. Փափազյանն այդ մամուլի հիմնադիրներից մեկը:

Գրապաշարից շատ տարիներ առաջ Ա. Փափազյանն աշխարհաբարի ջերմ կողմնակից էր և որոշակի բաժին ունի արևմտահայերենի ժողովրդականացման ու զարգացման գործում: Բանը միայն այն չէ, որ նա դաստիարակել է աշխարհաբարյանների երիտասարդ ու եռանդուն մի սերունդ, որ զգալիորեն նպաստել է աշխարհաբարի հաղթանակին, նաև մշակմանը, նա ինքը թե-

³⁰ Այդ հրատարակությունները նկարագրված են «Հայ գիրքը 1801—1850 թվականներին» գրքում (Երևան, 1967)՝ համապատասխան թվականների տակ:

լադրիչն ու «սրբագրիչն» էր սկզբից ևեթ աշխարհաբար հրատարակվող «Արշալույս արարատյան» թերթի: Հավաստի վկայություններ կան, որ նա է առաջիններից մեկը արևմտահայերենի թարգմանել «Աստվածաշունչը», որ լույս է տեսել Զմյուռնիայում՝ 1847—1850 թ.: Ժամանակակիցները հիշատակում են, որ նա կցանկանար աշխարհաբարը դասավանդել Մեսրոպյան վարժարանում, բայց այդպիսի իրավունք, առավել ևս հնարավորություն նա չունի: «Եթե», — ասել է նա, — երբեք աշխարհաբար դասագիրք մտցնեմ դպրոցի մեջ, փորձանք պիտի հանեմ գլուխս, զիս պիտի ելնեն հալածեն իբր բողոքական»³¹: Հատկանշական այս խոստովանությունը մնում է լոկ ավելացնել, որ համեմայն դեպս, Մեսրոպյան վարժարանն արևմտահայ առաջին դպրոցն էր, որտեղ աշխարհաբարը պաշտոնապես մուտք գործեց:

Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ Ա. Փափազյանի տեսությունն տարիները եղել են Մեսրոպյանի և հենց իր՝ առաջադեմ մանկավարժի շուրջը մղված պայքարի տարիներ՝ հետադիմության և առաջադիմության միջև, ինչպես և Պերպերյանն է ասում, «լուսո համար՝ խավարին դեմ, իրավանց համար՝ բռնաբարության դեմ, քաղաքակրթության համար՝ բարբարիկ հետադիմության դեմ»³², պայքար՝ իտալերեն ներկայացում բեմադրելու համար, պայքար՝ ֆրանսերեն լեզուն դասավանդելու համար, պայքար՝ «Սյունյաց ընկերության» համար, պայքար՝ ճակատագրական բուժի շուրջը, պայքար...

Դա Ա. Փափազյանի, կարելի է ասել, վերջին մարտն էր, որ նա երես առ երես մղեց ետադեմ հոգաբարձուների դեմ՝ բոլորն էլ աղաներ, բոլորն էլ խոսքները մեկ արած՝ հաշվհարդար տեսնել առաջադեմ մանկավարժի հետ: Նրանց լոկ մի առիթ էր պետք և այն գտնվեց. Մեսրոպյանի տեսուչը դպրոցից հեռացրեց տաճկերենի դասատուին, որը բավարար չափով չէր տիրապետում իզգլին, հայտնի էր իր վատ վարքով: Դա բավական էր, որպեսզի հոգաբարձուները միջամտեին դպրոցի ներքին գործերին, որոնց լիիրավ տնօրենը տեսուչն էր: Ա. Փափազյանը հակադրվեց հոգաբարձուների կամքին, շքանկացավ տաճիկ դասատուին վերականգնել և նրա փոխարեն տաճկերենի դասատու նշանակված հայ ուսուցչին ազատել: Բանը հասավ այնտեղ, որ իր քսանհինգ տարիները Մեսրոպյանին տված մանկավարժը հաշվադրված եղավ հրաժարական տալ: Զմյուռնիան բաժանվեց երկու հակադիր բռնակներով: Աշխատավորական մասը՝ «հասարակ ժողովուրդն ի սկզբանե վարժապետի կուսակիցն» էր, պաշտպանում էր Ա. Փափազյանին: Աշակերտները նույնիսկ «դրժգոհության անվայել ցույցեր կնեին երբեմն ընդդեմ հոգաբարձության», Քաղաքում շրջում էին ձեռագիր թուղթիկներ: Պահպանողականները սպառնացին Ա. Փափազյանին, մինչև անգամ հաշվհարդար տեսնելու ականարկներ արվեցին: Իր դերը կատարեց նաև մատնությունը:

Գրեթե երկու տարի տևեց այդ թեժ պայքարը: Ի վերջո հաղթող եղան առաջադիմականները, որոնց հաջողվեց հետադեմ հոգաբարձուների փոխարեն 1857 թ. ընտրել լուսամիտ գործիչների, որոնք լիովին վերականգնեցին

31 «Արևելյան մամուլ», 1894, էջ 406: Ա. Փափազյանն, իրոք, իբրև կաթոլիկ հալածվել է ոչ միայն ֆրանսերենը վարժարան մտցնելու առիթով, այլ նույնիսկ իր հսկողությամբ տպագրված նարեկացու «Ողբերգության» (1843) 221-րդ էջում բուժի նշանը դրված չլինելու համար: Պայքարը «հռչակավոր բուժի» շուրջը տևել է մոտ երկու տարի:

32 Ռ. Յ. Պերպերյան, Մարդիկ և իրք, Կ. Պոլս, 1885, էջ 69:

Ա. Փափազյանի տեսչական և մանկավարժական իրավունքները: Այդ հաղթանակը, սակայն, ձեռք բերվեց Ա. Փափազյանի կյանքի գնով: Կրկին Մեսրոպյանի տեսուչ նշանակվելուց երկու շաբաթ հետո սրտի երկրորդ կաթվածը նրան գերեզման տարավ՝ տակավին 51 տարեկան հասակում³³:

Այդպիսով Ա. Փափազյանը դարձավ նոր ժամանակների հայ մտավորականների թերևս առաջին զուգը՝ խավարամտության ու պահպանողականների դեմ մղված պայքարում: Նրա մահը, ինչպես մի քանի տարի անց գրել է արևմտահայ դեմոկրատիայի օրգան «Մաղիկը», սթափեցրել է զմյուռահայությունների երկրորդ դասին, որ «էսնաֆներե կբաղկանա» և «ժողովրդի մեծ մասը կկաղման»: Վերջ տրվեց «անտարբերության և անմիջամտության» ժամանակներին: Երկրորդ դասը (դասակարգը)՝ «ուսումնական և ուսումնասեր ազգայինը», Գր. Զիրինկիրյանի կարծիքով, «ստակ ունեցող» և ինքն իրեն «ազնվականի տեղ» դնող առաջին դասի դեմ բացահայտ պայքարի ելավ հենց այն ժամից սկսած, երբ ս. Ստեփանոս «եկեղեցիին մահաշունչ զանգակը 1857 թ. մարտի 7-ին... առաքինի ու շնաշխարհիկ հայրենասերի մը բռնակալության նահատակվելով գերեզման իջնելը կգուժեր ու կողբար»³⁴: Դա առիթ եղավ և «ուսումնականը իր լուսության, անտարբերը իր անտարբերության դառնահամբույր հետևանքը տեսավ, հրահրվեցավ իր զայրույթը. ձեռքերը ու մրտքերը շարժելու, և ապագային մեջ նմանօրինակ դեպքի մը առջև սպառազեն գտնվելու պատրաստվել սկսան... Ազատասեր ուսումնականին նպատակը, նվիրական նպատակը բռնության բազուկը խորտակել էր...», «եռապետությանը», այսինքն լուսավորության թշնամիներին, հակահարված տալն էր³⁵:

Այսպիսով, իրոք, կարելի է արձանագրել, որ պահպանողականության դեմ մղված երկարատև պայքարում առաջադիմականներն ավելի են ամրապնդվել և կարողացել են զարգացնել հայ առաջադիմական մշակույթը, ինչպես և նախապատրաստել նրա նոր վերելքը, որ սկսվում է 1860 թ.:

Զմյուռնիան հայտնի է նաև դեռևս 1830 թ. հիմնված աղջիկների (սկըդրում Սարդսյան, իսկ 1849-ից վերանվանված Հռիփսիմյան) վարժարանով, որտեղ դասեր էին տալիս Մեսրոպյանի ուսուցիչները և տնօրինում էին հենց Մեսրոպյանի տեսուչները: Մեսրոպյան վարժարանին զուգահեռաբար գործելով, Հռիփսիմյան վարժարանը տասնամյակներ շարունակ եղել է հայկական

33 Մեսրոպյանի տեսչի պաշտոնն Ա. Փափազյանից հետո վարել է նրա աշակերտ Մ. Աղաբեկյանը, որը, սակայն, երկու տարի հետո հրաժարվել է մեզ անհայտ պատճառով: Դատելով նրա մի շարք ճանաչումներ, առավել ևս հրատարակած կանոնադրությունից, Մ. Աղաբեկյանը լուրջ նորամուծություններ է մտցրել վարժարանի ներքին կյանքում, կանոնադրական ուժ է տվել այն նվաճումներին, որ ձեռք էր բերվել երկար տարիների ընթացքում՝ մասնավորապես ուսուցման դեմոկրատացման ուղղությամբ: Այդ կանոնադրությունը վաղ շրջանի հայ մանկավարժական մտքի և ուսուցումը հայկական դպրոցում կազմակերպելու մի փայլուն վավերագիր է, որը դեռևս պատշաճ ուշադրության չի արժանացել (տե՛ս «Յայտարարութիւն կանոնաց Ս. Մեսրոպեան ազգային վարժարանին, որ ի Զմիւռնիա ընդ տնօրինութեամբ Մարկոս Աղաբեկյան, ի 1857 հունիս 1-ե մինչև 1858 հունիս 1, Զմյուռնիա, 1858, 55 էջ: Տե՛ս նաև «Արշալույս արարատյան», 1857 դեկտեմբերի 27):

34 «Մաղիկ», 1861, էջ 51 և հետո:

35 Ա. Փափազյանի վախճանվելով պայքարը նրա շուրջը չի մարել: 1858—1859 թթ. լույս են տեսել երեք գրքույկներ, ինչպես և Զմյուռնիայում տարածվել են տետրակներ, որոնք արտացոլում են այդ պայքարի էշերը և ըստ էության նրա արձագանքն են:

գաղութի իգական սեռի երեխաների կրթության ու դաստիարակության լավագույն և միակ օջախը³⁶:

1851 թ. Մեսրոպյանի երկու սաները՝ Մ. Աղարեկյանը (1830—1908) և Մ. Մամուրյանը (1830—1901), իրենց նախաձեռնությամբ հիմնել են մասնավոր դպրոց: Երկու տարի հետո՝ 1853-ին այդ դպրոցն, անշուշտ չդիմանալով Մեսրոպյանի և Հռիփսիմյանի մրցակցությանը, նաև ոչ առանց պահպանողականների ջանքերի, փակվել է՝ թողնելով շատ բարի համբավ: Դպրոցն ունեցել է իր ընդարձակ հատուկ շենքը, ստեղծվել ու գործում էր ժան ժակ Ռուսոյի մանկավարժական առաջադիմական սկզբունքներով: Այստեղ տղաների և աղջիկների ուսուցումը տարվում էր համատեղ: Աշակերտները հանդիսավոր հավաքույթների ժամանակ բեմադրում էին ազգային-հայրենասիրական ոգով տոգորված պիեսներ: 1851-ին, օրինակ, նրանք բեմադրել են «Վասակ կամ անիծյալ գերդաստան» կատակերգությունը: Արապիսի հանդիսությունների ժամանակ դպրոցի տնօրեններն արտասանում էին հայրենասիրական ճառեր, կոչ անում ներկա գտնվող ծնողներին համախմբվել, հող տանել մատաղ սերնդի դաստիարակության մասին: Այս դպրոցով են սկսել իրենց բեղուն գործունեությունը հայ մանկավարժության երկու երախտաշատ դեմքերը՝ Մ. Մամուրյանն ու Մ. Աղարեկյանը:

Ձի կարելի չնշել զմյուռնահայ գաղթօջախի կյանքում մեծ դեր կատարած և համայնքի հասարակության նկատմամբ ցուցաբերված հոգատարության լավագույն ապացույցներից մեկը հանդիսացող ազգային հիվանդանոցի մասին: Հիվանդանոցը, որ ստացել էր ս. Լուսավորչյան անունը, ստեղծվել է «արդյամբք և տրուվք ժողովրդյան», 1801-ին՝ մինչ այդ գոյություն ունեցող «Մորթաբիա» («Մահի տուն») կոչվող բուժարանի փոխարեն: 1878 թ. Հակոբ և Հովհաննես Սպարթալյանների հոգացողությամբ կառուցվել է 40 հիվանդասենյակներով հիվանդանոցի առաջնակարգ շենք, եռահարկ՝ իր բոլոր հարմարություններով: Հիվանդանոցն ուներ իր ընտրովի խորհուրդը, բժիշկ-ստուլը, սպասարկող անձնակազմը: Այնտեղ բուժվում էին գերազանցապես աղքատ հիվանդները: Նա 120 տարի շարունակ սպասարկել է զմյուռնահայությանը³⁷:

Հայուստանի մշակութային կյանքում կենտրոնական դեր են կատարել նաև տպարաններն ու մամուլը:

Արևմտահայ պատմաբան Ա. Ալպոյաճյանը հայոց տպարաններին նվիրված իր ծավալուն և չափազանց արժեքավոր ուսումնասիրության մեջ հատուկ գլուխ է նվիրել Հայուստանի տպարաններին³⁸, Այն ամենին, ինչ հարուստ փաստերի հիման վրա ընդհանրացրել է պատմաբանը հարկավոր է ավելացնել հետևյալը: Հայուստանի մի շարք հայկական տպարաններ թե՛ այսօրվա և թե՛

36 Այս վարժարանի մասին տե՛ս Ա. Գրիգորյանի հոդվածը «Սովետական մանկավարժ», 1970, № 5, էջ 72—76) և Թեկնածուական դիսերտացիայի ավտոգրաֆներում՝ «Армянская школа с начала до 60-х годов XIX в.» (Ереван, 1972).

37 Այդ գործին է լծվել նաև 1861—1894 թթ. գործած «Աղքատասիրաց ընկերությունը» (տե՛ս Ն. Քոսյան, նշվ. աշխ., էջ 181. ընկերության կանոնադրությունը՝ նույն տեղում, էջ 184—189):

38 Այդ հատվածը մենք հրատարակել ենք «Պատմա-բանասիրական հանդեսում» (1964, № 2, էջ 67—84):

այնօրվա իմաստով ավելի լայն մշակութային գործունեություն են ծավալել, քան դա կարող է թվալ առաջին հայացքից, երբ այդ հաստատությունները դիտում ենք սոսկ որպես գրատպության օջախներ:

Դրա լավագույն, նույնիսկ եզակի օրինակն է Տետեյան եղբայրների տպարանը, որը գործել է շուրջ քառասուն տարի՝ 1853—1893 թթ.: Մեսրոպյանի նախկին սանը՝ Հարություն Տետեյանը (1832—1868), սոսկ տպարանատեր չէր և ոչ էլ նրա հաստատությունն էր միայն տպարան: Երիտասարդ, եռանդուն, բանիմաց և ճաշակ ունեցող գործիչն իր շուրջն է համախմբել դեմոկրատական ոգով տոգորված, գերազանցապես երիտասարդ թարգմանիչների և ստեղծել ուրույն մի խմբակցություն: Դա փաստորեն տպարան-հրատարակչություն էր, որին իրենց արգասաբեր աշխատակցությունն են բերել Տետեյան եղբայրներից բացի Գրիգոր Զիլինկիրյանը, Սարգիս Միրզայանը, Մատթեոս Մամուրյանը, Մեսրոպ Նուպարյանը, Գալուստ Կոստանդյանը և ուրիշներ: Նրանք էին հիմնականում որոշում հրատարակելիք ու թարգմանելիք գործերը և, լավագույնս տիրապետելով ֆրանսերենին, հայ ընթերցողներին են ներկայացրել ֆրանսիական կլասիկ և արդիական դրականության մի զգալի մասը:

Ընդհանուր առմամբ Տետեյան տպարանում հրատարակվել են մոտավորապես 200 անուն ինքնուրույն և թարգմանական գրքեր: Թե՛ ժամանակակիցները և թե՛ հետադուրացիները բարձր են գնահատել այդ տպագրական-հրատարակչական օջախի գործունեությունը, միաժամանակ ընդգծելով Տետեյանների անձնուրաց նվիրվածությունն իրենց գործին: Բնորոշ է, օրինակ, պատմարան Լեոի գնահատությունը Հ. Տետեյանի մասին. «Դա մի անխոնջ և երախտավոր հրատարակիչ էր, որի նմանը հայերիս մեջ չի տեսնված: Նա ինքն էլ գրագետ և լեզվագետ մարդ էր, լուսավորված ճաշակի տեր»³⁹:

Զմյուռնիայի հայկական մյուս տպարանները գրեթե ստեղծվել են այս կամ այն պարբերականի հետ միաժամանակ և նրանց հետ էլ դադարել են գործել: Բացառություն է կազմում 1830-ականի վերջերին հիմնված Պողոս և Պետրոս Թաթևկյանների վիժագրատունը, որն ավելի շուտ առևտրական ձևեր էր, քան մշակութային հաստատություն:

Բացառության շարքը կարելի է դասել նաև միսիոներների Զմյուռնիայում հիմնած տպարանը՝ դեռևս 1833-ի վերջին: Սովորաբար այս տպարանի գործունեությունը և հրատարակչությունները զմյուռնահայ մշակութային կյանքի պատմությունից դուրս են թողնվում, ելնելով նրանից, որ դրանք հետապնդում էին դավանափոխական նպատակներ: Զիշտ լինելով հանդերձ, այդ մոտեցումը պիտի համարել միակողմանի:

Իրողությունն այն է, որ տարբեր անունների տակ գործած Զմյուռնիայի միսիոներների տպարանը («Ամբրիզացուց» կամ «Մարգասիրական ընկերութեանն ամբրզացուց», «Գուլիելմոս Գրիֆիտի», «Հոման Հալլոկի») միայն մինչև 1850 թ. հրատարակել է 124 անուն գիրք՝ գերազանց մեծամասնությամբ կրոնական բովանդակությամբ, բայց աշխարհաբար լեզվով, նաև հայատառ թուրքերեն⁴⁰: Դրանից բացի միսիոներները հիմնել և այդ տպարանում հրա-

³⁹ «Մուրճ», 1901, № 4, էջ 268:

⁴⁰ Այդ հրատարակություններից մեկին՝ «Համաբարբառ կամ ցանկ նմանաձայն բառիցն չորոյ կտակարանի» (Զմյուռնիա, 1848, 604 էջ) անդրադարձել է Հ. Անասյանը «Հայ համա-

տարակել են թուրքահայ առաջին պարբերականը՝ «Շտեմարան պիտանի գիտելագո» (Զմյուռնիայում լույս է տեսել 1839—1843, 1844—1846 թթ.)։ Այդ հրատարակությունները, ներառյալ նաև միսիոներական պարբերականը, որևէ կապ չեն ունեցել Զմյուռնիայի հայկական օջախի, հետևապես նաև նրա բուն մշակութային կյանքի հետ, ինչպես և միսիոներական գործունեությունն այստեղ քիչ թե շատ հաջողություն չի ունեցել։ Սակայն հարցը, այսպես ասած, դավանաբանական կողմից բացի ունի նաև իր մշակութային նշանակությունը, որն անտեսել ճիշտ չէ։

Միսիոներական տպարանում հրատարակվել են նաև դիտական բովանդակությամբ գրքեր։ «Շտեմարանում» նույնպես նկատելի տեղ են գրավում դիտական նյութերը։ Բացի այդ դրանք լույս էին տեսնում ժողովրդի համար և որ առավել կարևոր է աշխարհաբար լեզվով, որի հղկման ու մշակման գործում, սկսած 1830-ական թվականներից, այդ հրատարակություններն անժըխտելի նշանակություն ունեցան։

Այս իմաստով հատկանշական է մանուկ ընթերցողների համար նախատեսված և 1838 թ. լույս տեսած մի գրքի առաջաբանի հետևյալ կոչը. «Սիրով կհորդորեմ բոլոր տղաքը, որ խոսելու ատեննին ալ ջանք ընեն միայն հայերեն խոսիլ ամեն ատեն՝ իրենց ազգին հետ, ան ալ անխառն աշխարհաբար ըլլա, որպեսզի օրե օր մեր աշխարհաբար լեզուն կատարելագործի։ Այս բանս հառաջ տանելու համար պետք է շատ աշխարհաբար գրքեր կարդալ, որոնք տաճկերենով խառնակ չեն»⁴¹։ Դրա օրինակը, դեռ գրապայքարը սկսվելուց շատ տարիներ առաջ, տալիս էին վերոհիշյալ հրատարակությունների թարգմանիչներն ու հեղինակները։

1839—1860 թթ. Զմյուռնիայում լույս տեսած յոթ պարբերականներից գոյատևել է միայն «Արշալույս արարատյան» թերթը, որը և գաղութահայ ամենից երկարակյաց պարբերականն է (1840—1887)։ Այս թերթը պահպանողական իր մշտատև ուղղության հետևանքով տակավին չի արժանացել լուրջ ուշադրության։ Սակայն թե՛ 1840—1850-ական թվականներին և թե՛ իր գրեթե կեսդարյա գոյության ընթացքում նա ամփոփել է արևմտահայ գաղութի մշակութային և հասարակական, մասամբ նաև համաշխարհային կյանքի գլխավոր իրադարձությունները և փաստական հարուստ նյութ է տալիս, հրատարակել է սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող արժեքավոր վավերագրեր։ Համենայն դեպս նա Զմյուռնիայի գաղթօջախի անցած դարի կեսերի պատմության առավել ամբողջական ու հավաստի աղբյուրն է, առանց որի գրեթե անհնար է շարադրել այդ պատմության քիչ թե շատ կարևոր էջերը։ Թերթի դերը մեծ է նաև աշխարհաբարի տարածման ու զարգացման գործում։ Պակաս կարևոր չէ այն հանգամանքը, որ «Արշալույս արարատյանը» ստացվում էր հայկական համարյա բոլոր խոշոր գաղթօջախներում։

Զմյուռնահայ կյանքում կարևոր իրադարձություն էր «Հայրենասեր» (1843—1846) թերթի հրատարակությունը։ Ճիշտ է թերթը լույս է տեսել ընդամենը 29 ամիս՝ 108 համար, սակայն նրա երևան գալը նշանավոր երևույթ էր թե՛ զմյուռնահայ կյանքում և թե՛ հայ մամուլի պատմության մեջ։ Մինչ

բարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը՝ մեծարժեք ուսումնասիրության մեջ (տե՛ս «Էջմիածին», 1971, № 11—12, 1972, № 1—4)։

⁴¹ «Զբոսարան մանկանց», Զմյուռնիա, 1838, էջ 2 (չէշակաված)։

այդ մամուլի գերիշխանությունը գտնվում էր Ղ. Պաղազարյանի միանձնյա իշխանության ներքո: «Հայրենասերը» բացահայտորեն չհակադրվելով «Արշալույս արարատյանին», վերջ տվեց նրա տասներեքամյա մենաշնորհին, ամենայն համոզությամբ և մամուլի դերի լավագույն ըմբռնումով հիմնավորեց Զմյուռնիայում երկրորդ պարբերականը հրատարակելու անհրաժեշտությունն ու իրավունքը: Այս թերթը հրատարակում էին արդեն «քանի մը ուսումնական անձինք», որոնք «նոր օրագրությունը» զարկ տալու, ինչպես և «ազգագրագրքեր տպելու» համար հիմնել էին «Արագածոնյաց ընկերությունը»: Այդպիսով, թերթն արտահայտում էր ոչ թե մեկի՝ խմբագիր-տնօրենի կարծիքը, այլ կոլեկտիվ աշխատանքի ու մտածողության արդյունք էր՝ հանգամանք, որ և՛ նորություն էր հայ կյանքում, և՛ էական առաջադիմական քայլ էր: Հենց միայն դրանով, իսկ բովանդակությամբ առավել ևս, «Հայրենասերը» պահպանողական «Արշալույս արարատյանի» առաջին մրցակիցն էր:

Բնավ տարօրինակ չէ, որ մեծահարուստ վաճառականները և զմյուռնահայ պահպանողականները, թերևս նաև Ղ. Պաղազարյանը, չէին կարող հաշտ աչքով նայել «Հայրենասերին», նրա «վերատեսուչ», տակավին երիտասարդ խ. Մեխիբեղումյանին, «Արագածոնյաց ընկերությանը»: Հարձակման անցնելու առիթը չուղացավ: Թերթի 10-րդ համարում երևան եկավ «Առևտրի մեջ իրարու օգնելու վրա» անհասցե, բայց քննադատական ակնարկներով հոդվածը, որը զմյուռնահայության մեջ և «Արշալույս արարատյանի» էջերում մեկնաբանվել է, որպես որոշակի մեծատուն-առևտրականների դեմ ուղղված քննադատություն: Թերթի վրա կախված մահացու վտանգը վանելու համար հրատարակվում է խ. էքզյանի նամակը, որտեղ բացատրվում է, թե չարակամ մեկնաբանությունների ենթարկվող հոդվածի միակ նպատակն էր հորդորել հայ առևտրականներին՝ «իրարու հարգը վար չզարնենք հավետ օտար ազգերու առջև»: Հաջորդ համարում զետեղվում է նաև Ն. Մ. Զ.-ի նամակը՝ Կ. Պոլսից, որտեղ հեղինակը «Հայրենասերին» պաշտպանում և ոգևորում է «բռնիթիբայի դեմ», ափսոսում, որ ինքը հեռու է «առաքելական մարտին ասպարեզեն»:

Բայց ոչինչ չօգնեց. «Հայրենասերը» վեց ամսով փակվեց: 1850-ական թվականների կեսերին քննադատական ոգին, նույնիսկ շատ անմեղ ու անորոշ, այնքան խորթ էր գաղթօջախին, որ նրա ազդեցիկ խավը բնավ հանդուրժել չէր կարող և շտապեց խեղդել: Դրանով չեն սահմանափակվել թերթի դեմ ձեռնարկված հալածանքները: 1845-ի մեծ հրդեհը վնասել է վերահրատարակվող թերթի և ընկերության համատեղ տպարանը: Տոկալով դժվարությունների դեմ, ընկերությունը և նրա թերթը մի կարճ ժամանակ ևս դիմացան, բայց 1846-ի մայիսին դադարեցին գոյություն ունենալ: «Ազգագրագրքեր տպելու» «Արագածոնյաց ընկերության» ծրագիրը դրանից այն կողմ չանցավ: Նրան հաջողվեց 1843 թ. և 1845 թ. հրատարակել լոկ երկու գիրք՝ մեկը նվիրված Ներսես կաթողիկոսի ճանապարհորդությանը՝ 1808 թ., մյուսը՝ հայատառ թուրքերեն «Յայտարար ուղղութեան...» ծավալուն երկը, որի հեղինակն է Հ. Զամուռնյանը:

«Հայրենասերի» ճակատագրից շատ բանով չի տարբերվում «Արփի արարատյան» (1853—1855) պարբերականի ճակատագիրը: Նրա հրատարակիչներ Տետեյան եղբայրներն ունեին տպագրական ամուր բազա, հետապնդում էին ավելի լայն նպատակներ, քան «Արշալույս արարատյանը», իրենց այս

հրատարակությանը տվել էին տնտեսագիտական թեքում, փորձում էին գրական և մանավանդ գիտական նյութերով ամսատետրակը դարձնել հետաքրքրական: Բայց այդ ամենը չապահովեցին «Արփի արարատյանի» երկարատև գոյությունը: Ենթադրվում է, որ պարբերականը փակվել է նյութերի և բաժանորդների սակավությունից:

Բայց խնդիրը միայն այդ չէ: Հմյոռնահայ իրականությունը դեռևս պատրաստ չէր միաժամանակ և երկարատև մեկից ավելի պարբերական ունենալու համար: Իր պահպանողական ուղղությամբ «Արշալույս արարատյանը» բավականաչափ իշխող էր, որպեսզի նրա կողքին կարողանար գոյատևել նոր ուղղությամբ ու նոր խնդիրներ առաջադրող որևէ պարբերական: Դրա համար էլ Հմյոռնահայ նոր պարբերականները («Միություն»՝ 1860 և այլն), նույնիսկ նրանք, որ հանդես են եկել մի տասնամյակ հետո հագիվ մի քանի տարի են գոյություն ունեցել: Միայն 1871-ին հրապարակ իջած «Արևելյան մամուլին» է բախտ վիճակվել տասնամյակներ գոյատևելու՝ Մ. Մամուրյանի հմուտ և երախտաշատ խմբագրության ներքո:

1800—1850-ական թվականներին Հմյոռնիայում համեմատաբար թույլ զարգացում է ապրել գիտությունը, առավել ևս բնագիտությունը: Դա հանգանակալ է նաև Արևմտյան Հայաստանին, հայտնի չափով նաև Արևելյան Հայաստանին: Անցած գրեթե ամբողջ դարաշրջանում հայ մտավորականը հնարավորություն չունեցավ գիտությամբ զբաղվելու. դա հանդգնության հասնող համարձակություն կլինեք, ինքնակամ սովի մատնվել կնշանակեք:

Հակառակ դրան Հմյոռնիայում, գլխավորապես դարակեսին, որոշ քայլեր են ձեռնարկվել գիտությունները պրոպագանդելու, գիտական հարցերով զբաղվելու ուղղությամբ:

Գիտությամբ զբաղվելու առաջնությունն արևմտահայ աշխարհում պատկանում է Պողոս Մելիքահյանին (1788—1855): Նրա անունը (թեև հիմնականում գործել է Կ. Պոլսում) սերտորեն կապված է նաև Հմյոռնիայի հետ. ծնվել է գաղթօջախի աղվարձան Գրգաղաջ գյուղում, տեղում նախնական կրթություն ստանալուց հետո երեք տարի սովորել է Մեսրոպյան վարժարանում՝ աշակերտելով Հովհ. Վանանդեցուն: Հետագայում մի կարճ ժամանակամիջոց դասավանդել է այդ վարժարանում և մշտապես սերտ կապեր ուներ Հմյոռնահայ լուսամիտ գործիչների, մանավանդ Գր. Կոստանդյանի հետ:

Աղքատ ընտանիքի զավակ լինելով, նա մեծ դժվարություններ է կրել, բայց պատանեկան հասակից հանդես է բերել բուռն սեր դեպի ուսումը և եզակի ընդունակություններ՝ գիտությունների ասպարեզում: Դրա համար նրան շնորհվել է Ֆիզիկա Պողոս պատվանունը, որով և հայտնի է գրականության մեջ: Արևմտահայ, ինչպես և Հմյոռնիայի հայկական գաղութի համար բնորոշ է Ֆիզիկա Պողոսի և՛ գիտական գործունեությունը, և՛ բուն կյանքը, որ ծանր էր ու տառապալի: 1839-ի փետրվարին նա կանչվել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, բանտարկվել մահապարտների խցիկում, ապա թուրք ոստիկանների հսկողության ներքո, հիվանդ վիճակում աքսորվել Սեբաստիայի ս. Կարապետ վանքը⁴²: Աքսորելու պատրվակ է ծառայել իբրև թե բողոքա-

⁴² Ֆիզիկա Պողոսն աքսորի է դատապարտվել Կարապետ ամիրա Պալյանի, Հովհ. Զամուռնյանի և Կ. Պոլսի Ստեփանոս պատրիարքի ու նրանց համախոհների միասնական ջանքերով: Ուշագրությունից վրիպած այն փաստը, որ դեռևս 1839 թ. սկզբից Զամուռնյան—Տե-

կանության հարելը, բայց հիմնական պատճառը նրա դավանած ու քարոզած գաղափարներն էին՝ հակոտնյա ու անհաշտ ընդունված կրոնական պաշտոնական գաղափարախոսությանը⁴³:

Ֆիզիկա Պողոսը ձգտում էր ինքնուրույն բացատրություններ տալ աշխարհի բնական երևույթներին, դուրս գալ կրոնական գաղափարախոսության կաղապարից, զբաղվում էր աշխարհի ստեղծման, նախանյութի, տիեզերքի, ֆիզիկական պրոցեսների հարցերով, տրամաբանությամբ ու իմաստասիրությամբ: Այդ խնդիրներին էին նվիրված նրա ձեռագիր 16 աշխատությունները, որոնք ձեռագրապատկերային պահին պատրիարքարանը բռնագրավել ու կորստի է մատնել: Աքսորից վերադառնալուց հետո նա գրել է մի տասնյակից ավելի նոր աշխատություններ, որոնցից լույս են տեսել միայն մի հատորիկ⁴⁴ և մի քանի հատվածներ՝ մամուլում⁴⁵: Մնացած նրա ամբողջ ժառանգությունը, բացառությամբ որոշ ձեռագրերի⁴⁶, մնացել են անտիպ. դրանց ճակատագիրը մինչև հիմա էլ մնում է անհայտ:

Արևմտահայ իրականության մեջ մեծ համբավ ունեցող գիտնականն իր վերջին տարիներն անց է կացրել գրեթե ճգնաժամական կյանքով, վախճանվել է շարժանական ուրեմ գնահատանքի: Բացառություն է թերևս Գր. Կոստանդյանի մի նամակը, որտեղ նա, գրելով այն մասին, որ «Արշալույս արարատյանը» հրաժարվում է հրատարակել գիտնականի մի փոքրիկ գործը, նրկատում է. «Հավաստի լեռուք թե ոչ ի շարս ցնորական գրուածոց և ոչ ընդ անպիտան թուղթս մնասցին սոքին, այլ ի լոյս ազգի և ցոյց աշխարհի տարածեսցին ... Գայցե ժամ զի ձեռդ աշխատություն պայծառապակ փայլեսցի ի մատյանս ազգս»⁴⁷: Միայն վախճանվելուց հետո հայ մամուլը դրվատական խոսք արաց Ֆիզիկա Պողոսի հասցեին⁴⁸, ապա երևացին նրան նվիրված մի քանի հոդվածներ, որոնց թվում նաև երիտասարդ Ե. Օտյանի բնորոշող ակնարկը⁴⁹:

Ավելի դառն ճակատագիր ունեցավ Պետրոս Թընկերը, որի անունը և գործունեությունը ևս աննշվում են Զմյուռնիայի հայկական գաղութի հետ: Մխիթարյանների նախկին սանը, ուր լավագույնս ծանոթ էր Եվրոպային, մանավանդ Ֆրանսիային, հիասթափված բուրժուական աշխարհի «մոլություններեն ու մոլորություններեն», խորթացած ամենքից, քաշվել է Զմյուռնիայի մոտ գրտնըվող Պուճա գյուղը և շուրջ հիսուն տարի՝ մինչև իր վերջին օրը (1881) մենակյաց կյանք վարել: Տիրապետելով բազմաթիվ լեզուների, նա, տասնամ-

րոյնքը գործարար մասնակցություն ուներ հայ մտավորականների հալածման ու աքսորման ազգադավ գործում, ցույց է տալիս, որ արևմտահայ ռեակցիայի գաղափարական պարագլուխը արևմտահայ դեմոկրատների և Մ. Նալբանդյանի դեմ պայքար մղելուց առաջ արդեն բռնել էր մատնության ու խորդավանքի արգահատելի ուղին:

43 Արևմտահայ փիլիսոփա-գիտնականի մասին տե՛ս էդ. Հարությունյան, Հայ փիլիսոփայական միտքը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1965:

44 Տե՛ս «Տրամաբանություն Ֆիզիկա Պողոս պատուելիուն ի պետս դպրոցականաց...», Կ. Պոլիս, 1876:

45 Տե՛ս «Աստղիկ արևելյան», 1855, էջ 69—75, 85—100:

46 Տե՛ս Մատենադարան, ձեռագիր № 7257, ԳԱԹ, Բ. Ազատյանի ֆոնդ, բաժին 4, վ. 142: Մենք հրատարակության ենք պատրաստում Ֆիզիկա Պողոսի որոշ գործեր:

47 ԳԱԹ, Բ. Ազատյանի ֆոնդ, բաժին 4, թ. 6:

48 Տե՛ս «Աստղիկ արևելյան», 1855, էջ 104—106:

49 «Մասիս», 1892, № 3972, էջ 288—290:

յակներ շարունակ տքնելով, ստեղծեց ուրույն մի լեզու՝ սահլերա (համաշխարհային լեզու), հորինեց նրա քերականությունը, տառերը, բառարանը, առօրյա զրուցարանը: Դրանք բոլորը նա տպագրել և բաժանում էր այցելուներին, նույնիսկ ինքն էր վճարում նրանց, ովքեր ցանկանում էին սովորել իր ստեղծած լեզուն (ի դեպ նրան այցել է նաև Գ. Սրվանձտյանը):

Մարդկությունից զատվելով, Պետրոս Թընկերը շարունակում էր մտածել նրա մասին, ուզում էր, որ ամբողջ մարդկությունը խոսի մի լեզվով, զանազան կրոնների փոխարեն ունենա մի կրոն: Նա հույս ուներ, որ այդ դեպքում կվերանան պատերազմները, դավանաբանական կոփվները, անհաշտությունները:

Միաժամանակ նա իր մենաստանում, որ անվանել էր Այգերատանդ (Տաճար իմաստություն), որքան կարելի է դատել առանձին վկայություններից, զբաղվում էր նաև բնագիտությամբ՝ հանքային քարերով, բուսաբանությամբ, աշխարհագրությամբ: Որքան էլ տարօրինակ և անախրոնիկ էր այդ գործիչը, — նկատել է Ա. Բ. Կարինյանը, — նա էլ էր բնորոշում բազմազգ քաղաքի (Հայուհանգ — Մ. Հ.) բնակչության որոշ շերտերի մտայնությունը: Այդպիսի ոչ մի ուրիշ Թընկեր չէր կարող ծնվել և սնվել հին Թուրքիայի որևէ այլ քաղաքում⁵⁰:

Կան ուրիշ փաստեր, որոնք վկայում են Հայուհանգում գիտությունների նկատմամբ աճած հետաքրքրության մասին: Մամուլում պարբերաբար հրատարակվող գիտական նյութերից բացի այնտեղ լույս են տեսել առանձին գրքեր նվիրված տրամաբանությանն ու աստղագիտությանը: Այդպիսի որոշ գրքերի հրատարակության նախաձեռնությունը հայտնի չափով պատկանում է Ֆիզիկա Պոզոսի ղեկավարած գիտական խմբի մտերիմ Գրիգոր Կոստանդյանին, որը ժամանակի լուսամիտ և առաջադիմական գործիչներից մեկն էր: Բայց Հայուհանգի գաղթօջախում բնագիտությամբ զբաղվելու առաջին լուրջ փորձը կատարել է նրա ուղղին՝ հայտնի բնագետ-փիլիսոփա Գալուստ Կոստանդյանը (1840—1898)⁵¹:

Գ. Կոստանդյանը հայ մշակութային կյանքի բացառիկ դեմքերից մեկն է և ամենախոշոր գիտնական-մտավորականը Հայուհանգի հայկական գաղթօջախում: Տակավի՜ն պատանի հասակում, երբ դեռ սովորում էր Մեսրոպյան վարժարանում, նա սկսել է հանդես գալ մամուլում՝ հրատարակելով եվրոպական լեզուներից կատարած զանազան թարգմանություններ: Մեսրոպյան վարժարանի աշակերտների հրատարակած «Թուֆակ հայկազյանում»՝ 1855 թ. նա մասնավորապես հրատարակել է անգլերենից կատարած մի զրույցի թարգմանությունը՝ «Նշանախոս վարժապետը վերնագրով»⁵²: Նույն տարում նա առանձին հրատարակել է եգիպտական նշանագրերի ժան Զրանսուա Շամպոլյոնի վերծանությունների տախտակը, որն արժանացել է Ստ. Ոսկանյանի խրախուսանքին՝ «Արևելքի» էջերում: Ապա պատանի Գ. Կոստանդյանը լույս է ընծայել «Ափպել», «Տիեզեր», «Զապել», «Սաթենիկ» երաժշտական գործե-

50 ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1944, էջ 6—7, էջ 35:

51 Գ. Կոստանդյանի ծննդյան թվականը նշվում է 1840 և 1843: Հավանաբար ճիշտը վերջինն է: Նրա մտերիմ Մ. Նուպարյանը վկայում է, որ նա մահացել է 55 տարեկան հասակում՝ 1898 թ. («Արևելյան մամուլ», 1909, № 9, էջ 411):

52 Տե՛ս «Թուֆակ հայկազյան», 1855, № 3, էջ 38—40:

րը: Հետագայում, ինչպես ենթադրվում է, նա գրում էր նաև օպերա, որի մասին մամուլում եղած անորոշ մի հաղորդումից բացի ոչինչ հայտնի չէ⁵³: Բայց աներկբայելի է, որ երաժշտությունը եղել է Գ. Կոստանդյանի տևական զբաղմունքը⁵⁴:

Առավել նշանակալից է երիտասարդ Գ. Կոստանդյանի «Հասարակաց թանգարան» ընդհանուր խորագրով մատենաշարի հրատարակությունը՝ 1858 թ.: Այդ մատենաշարը բաղկացած է 16 գրքույկներից (հատոր Ա—ԺԶ)՝ յուրաքանչյուրը նվիրված գիտության մի առանձին բնագավառի: Դրանք են՝ Գանկաբանություն, Երկրաբանություն, Զգողաբանություն, Քիմիաբանություն, Հիվանդաբանություն (և Կալվաճաբանություն), Կենդանաբանություն, Բուսաբանություն, Զերմաբանություն, Առողջաբանություն, Աստղաբանություն, Լուսաբանություն, Մագնիսաբանություն, Մետաղաբանություն, Նմանաբանություն, Մթնոլորտաբանություն, Ձայնաբանություն⁵⁵:

Առաջին հայացքից թվում է թե դրանք 15-ամյա (կամ 18-ամյա) երիտասարդի սոսկ խանդավառության արդյունքն են: Սակայն իրականում Գ. Կոստանդյանն իր ձեռնարկած քայլին մոտեցել է ամենայն լրջությամբ ու հասուն գիտակցությամբ և փաստորեն կատարել է հայ իրականության մեջ անօրինակ սխրագործություն, որի գիտական և հասարակական նշանակությունը չափազանց մեծ է⁵⁶:

Նախ և առաջ պետք է նկատի ունենալ, որ Գ. Կոստանդյանն իր ձեռնարկն իրագործել է խոպան ասպարեզում: Մինչև այդ մեր իրականության մեջ գրեթե չեն զբաղվել այդ գիտություններով և դրանց մասսայականացման գործով: Իհարկե, Գ. Կոստանդյանի գործն ինքնուրույն չէ, այլ, ինչպես նշում է ինքը, «ծաղկաբաղ մ' է բազմաթիվ բնագիտական» գրքերից ու հոդվածներից: Բայց, տալով գիտության այս կամ այն բնագավառին նվիրված իր համառոտ ուրվագիծը, նա ձգտել է շարադրանքը կատարել «անձանձրույթ եղանակով», առանց մասսայական ընթերցողի համար ավելորդ մանրամասնությունների մեջ մտնելու, ներկայացրել է «գիտությանց միայն բուն իմաստը»⁵⁷: Հասարակության համար նախատեսելով իր հրատարակությունը, Գ. Կոստանդյանը բոլոր հատորները անվճար բաժանել է տվել ժողովրդին («ձերի նվիրեցինք ազգիս՝ հատկապես, որ նպաստամատույց ըլլա անոր ուսումնասիրության հառաջ երթալուն»):

53 Տե՛ս «Գանկաբանութիւն համառոտ», Զմյուռնիա, 1858, շապիկի 4-րդ էջը, «Արշալույս արարատյան», 1863, № 705, Գ ա ռ Ն ի կ Ս տ ե փ ա ն յ ա ն, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, Երևան, հ. 1, 1962, էջ 205, հ. 2, 1969, էջ 188: Մ ա թ և ո ս Մ ու ր ա դ յ ա ն, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարառկղբում, Երևան, 1970, հ. 2, էջ 76:

54 Տե՛ս Գ. Կոստանդյանի հոդվածները՝ «Հայոց եկեղեցւոյն մեջ երգեհոն հաստատելու հորդոր» և «Հայաստանցոց պաշտմունքը երգեհոնով կատարելու եղանակին վրա» («Արշալույս արարատյան», 1858, № 567 և 581), ինչպես և Մ. Նուպարյանի վկայությունն այն մասին, որ նա հաճախ նվիրվում էր երաժշտությանը, «քաջ դաշնակահար մ' էր» («Արևելյան մամուլ», 1902, № 9):

55 «Հասարակաց թանգարանի» յուրաքանչյուր տետրակը լույս է տեսել որպես առանձին բրոշյուր՝ միատեսակ ձևավորումով: Էջերի ընդհանուր քանակն է շուրջ 360:

56 Գ. Կոստանդյանի գործունեությանը նվիրված ուսումնասիրություններում ըստ էության դեռևս պատշաճ ուշադրություն չի նվիրված «Հասարակաց թանգարանի» հրատարակությանը:

57 Տե՛ս «Հասարակաց թանգարանի» ընդհանուր նախաբանը՝ կցված «Գանկաբանութիւն համառոտ» բրոշյուրին (հատոր Ա, էջ է—Ը):

Այնուհետև, նա չի միջամտել նյութին, այլ հավատարիմ է մնացել իր նպատակին և «լիովին չեզոք վիճակ մը բռնել», որպեսզի դրանով իսկ չստիպի ընթերցողին «բնագիտական վեճերու մեկ կամ մյուս կողմը» հարելու՝ հաճախ տալով նաև այս ու այն հակադիր կարծիքները:

Ուշագրավ է, որ Գ. Կոստանդյանը չի ձգտել հայ ընթերցողներին գաղափար տալ անխտիր բոլոր գիտությունների մասին, այլ ընտրել է միայն այն, «որոնց վրա մինչև հիմա հիմնական կերպով գրած չէ»: Նրա գլխավոր իդձն էր, որ «գոնե քիչ մը բորբոքեք հասարակության հետաքրքրությունը գիտությունների վրա, որով քիչ մ' ալ դոճեք բնագիտության հետեւին, մանավանդ աղքատ տղալոց համար Գործնական Արհեստներ դրվին անոնց մեջ, որ երբ աղքատ տղա մը իր հայկաբանությունը լմնցնեք, երկար բարակ ճարտարախոսությունների չհետեւելով, ան Գործնական Արհեստներին մեկուն հետեւեք և կամ լեզվագիտության, որով երբ դպրոցին ելլեք ընտանիք սնուցանելու կարող ըլլաք»⁵⁸:

Իր դիտական-լուսավորչական գործունեության սկզբնական էտապում Գ. Կոստանդյանը, ինչպես տեսնում ենք, հետապնդում էր միանգամայն կոնկրետ նպատակներ: Այդ մասին նա նշում է նաև «Հասարակաց Թանգարանի» 1857 թ. մարտին գրած ընդհանուր նախաբանի հետգրությունում. «Ազգերնիս լուսավորելու գլխավոր միջոցներն են մեկն ալ պետք է ճանչնանք գիտական, արվեստական, մանավանդ երկրագործության, այգեգործության, և ասանկ սիրտանի արհեստներուն վրա կատարելապես տեղեկություն տվող գրքերուն ազդին ձրիաբար նվիրվելը — երանի՜ թե այսպիսի նպատակով ընկերություն մը կազմվեք և շարունակվի»:

Այս տողերը, որ արտացոլում են հեղինակի ուրույն ծրագիրը, ինչպես դժվար չէ նկատել, նախաաղերս տւնեն Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը, որպես ուղիղ ճանապարհի» (1862) հայտնի տողերի հետ:

Հանձին Գ. Կոստանդյանի, դատելով թեկուզ մինչև 1860-ականը ծավալած նրա գործունեությունից, Զմյուռնիայում հրապարակ էր իջել լայն ու խոր ընդգրկումով մի գիտական-գործիչ, որին վիճակված էր լրջորեն խթանելու հայ մշակութային կյանքն ու գիտական միտքը: Դրա մասնակի արտահայտությունը եղավ 1878 թ. նրա հրատարակած հուլակավոր «Մեթոդի վրա» գիրքը, որ ցնցեց արևմտահայ իրականությունը և մնայուն նշանաձող դարձավ հայ գիտական մտքի զարգացման պատմության մեջ: Բայց դա նրա գիտական ժառանգության սոսկ մի բեկորն է այն ամենի համեմատ, ինչ նա ծրագրել էր, նույնիսկ այն գործերից, որ նա պատրաստել էր հրատարակելու, որոնք, անտիպ մնալով շուրջ երկու տասնյակ տարիներ, անդառնալի կորստի մատնելվեցին, որպեսզի նրանց հեղինակը գոնե համահու չհալածվի, չդատափեսովի, ինչպես դա եղավ «Մեթոդի վրա» երկը երևան գալու օրվանից սկսած:

Կարելի է այստեղ նշել զմյուռնահայ մշակութային կյանքը բնորոշող մի շարք այլ փաստեր ևս: Սակայն այդ կյանքի պատմության տրված ուրվագիծն էլ թվում է հնարավորություն է տալիս անելու մի շարք հետևություններ:

1. Ուսումնա-կրթական գործը Զմյուռնիայի հայկական գաղթօջախում 1800—1850-ական թվականներին աննախադեպ վերելք է ապրել: Նրա դպրոցները դարձել են գաղութի մշակութային կյանքի բուն կենտրոնները, զարկ են տվել առաջադիմական գաղափարախոսությանը, դաստիարակել են ազգային

⁵⁸ Նույն տեղում, էջ Ժ—ԺԱ:

ոգով ու ավանդություններով տոգորված գործիչներ, Ուսումնա-կրթական գործի զարգացումն ընթացել է կղերա-պահական ու խավերի դեմ մղվող տեղական պայքարով, որը վերջին հաշվով պսակվել է առաջադիմականների հաղթանակով:

2. Գաղթօջախի մշակութային կազմակերպությունները, հարատև երկ-պառակությունների և հարուցվող դժվարությունների ու արգելքների պայ-մաններում լայն գործունեություն են ծավալել մշակութային կյանքի զարգաց-ման, ազգապահպանության ասպարեզում:

3. Աճած նոր սերունդը 1840—1850-ական թվականներին զարկ է տվել հայ մամուլի և գրատպության զարգացմանը: Զմյուռնիայի հայ պարբերա-կանները ու սպարանները լուրջ դեր են կատարել գաղթօջախի մշակութային կյանքում, գրեթե ի չիք են դարձրել ամերիկյան միսիոներների տեղում ծա-վալած գործունեությունը:

4. Զմյուռնիայում մեծ զարգացում է ապրել թարգմանական գրականու-թյունը, որի շնորհիվ գաղութահայությունը և առհասարակ հայ հասարակա-կան միտքը հաղորդակցվել են արևմտաեվրոպական, մասնավորապես ֆրան-սիական, առաջավոր գրականությանը և գաղավարախոսությանը: Դա տեղի ունեցել է հակադրություն պահպանողական հոսանքի շարունակ ուժեղացող դիմադրությանը և հակադրումներին:

5. Դժվարությամբ ու ծանր երկունքով զմյուռնահայ իրականության մեջ ծնվում ու ամրանում էր գիտական միտքն, իր առաջին քայլերն էր անում բնագիտությունը:

Այդ ամենով բնորոշվում է նախապատրաստական այն շրջանը, որ Զը-մյուռնիայում նախորդել է 1860-ականից սկսված և բուռն վերելք ապրած հայ մշակութային կյանքին՝ գրեթե բոլոր ասպարեզներում: Դրանք որոշիչ դեր են կատարել գաղթօջախի ազգային դիմագծի պահպանության և հայ մշա-կույթի զարգացմանը նպաստելու գործում:

АРМЯНСКАЯ КУЛЬТУРА В ИЗМИРЕ В 1800-х—1850-х гг.

М. Н. АКОПЯН

Резюме

В измирской армянской колонии, просуществовавшей до сентября 1922 г., проживало около 8—10 тысяч армян.

В колонии действовали армянские школы, в конце 30-х годов были созданы армяноские типографии, издавались газеты и журналы («Штемаран литани пительяц»—1839, «Аршалуйс араратян»—1840, «Айренасер»—1843), печаталось много переводов с французского, что способствовало формированию западноармянского литературного языка.

В Измире были учреждены общественные организации, которые содействовали развитию национальной армянской культуры («Сюняц инкерутюн», «Аракацуньяц инкерутюн»); развернули свою просветительскую деятельность Ован Ванадзечи, Андреас Папазян, Матевос Маму-рян, Гукас Агабекян, Физика Погос, Галуст Костандян и другие.

Культурная жизнь измирской колонии первой половины XIX в. подготовила ее расцвет с 60-х годов.